

**«Հայաստանի Հանրապետության ֆինանսների և  
Էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի  
9-ի N 5-Ն հրամանում լրացում կատարելու մասին»  
ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագիծ**

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 5-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2017 թվականի դեկտեմբերի 19-ի ՆՀ-922-Ա հրամանագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետը`

**Հրամայում եմ**

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանի N 23 հավելվածում «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով 1 05 049» տողից հետո լրացնել նոր տող` հետևյալ բովանդակությամբ.

« ՀՀ բնապահպանության նախարարության անտառային պետական կոմիտե	»: 1
--	------

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: